



CFLI/FCIL

Canada Fund for Local Initiatives
Fonds canadien d'initiatives locales



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 28, 2022

ՔՈԱՖ-ը մեկնարկում է նոր նախագիծ՝ Լոռիում կանանց աշխատատեղերով ապահովելու նպատակով

ԵՐԵՎԱՆ — «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI) ֆինանսական աջակցությամբ 30 կանանց համար աշխատանքային հնարավորություն է ստեղծում Լոռու մարզի հյուրընկալության ոլորտում: Նախագիծը, որը կոչվում է «Աշխատանքային հմտությունների զարգացման և հյուրընկալության ոլորտում աշխատանքի տեղավորման միջոցով աջակցություն Լոռիում խոցելի խմբերի կանանց», մեկնարկել է 2022թ. սեպտեմբերի 1-ին և կավարտվի 2023թ. փետրվարի 28-ին:

Նախագիծը խթանում է գենդերային հավասարությունն ու սատարում է կանանց տնտեսական զորակցումը՝ անդրադառնալով աշխատաշուկայում կանանց համար անբարենպաստ պայմանների առկայությանը, հյուրընկալության ոլորտի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների պակասին: Արդյունքում՝ խթանվում է ոլորտում տարածաշրջանի մրցունակությունն ու տնտեսական զարգացումը:

Տասուրթ և բարձր տարիքի 30 կանայք կվերապատրաստվեն աշխատանքային որակավորման բարձրացման համար: Խոհարարական արվեստի և հյուրընկալության երեմյան ակադեմիայի կողմից կանցկացվեն ինտենսիվ դասընթացներ խոհարարական արվեստի, ռեստորանային կառավարման և սպասարկման ոլորտներում: Ավելին՝ Լոռիում կին սեփականատեր կամ տնօրեն ունեցող յոթ գործընկեր հաստատություններ (Դեբեդ, Լայֆ, Չամիչ, Անգար, Կաղնի, Թեժ Լեռ, Թումանյան զարգացման հիմնադրամ, ինչպես նաև ՔՈԱՖ-ի Կոնցեպտ հյուրանոց և համաժողովների կենտրոն) աշխատանքի կընդունեն վերապատրաստման ծրագիրն հաջողությամբ ավարտած 6 խոհարար, 6 ռեստորանի մենեջեր և 18 մատուցող: Բացի այդ, Արմենիա Մարիոթ հյուրանոցը, ՔՈԱՖ-ի Կոնցեպտ հյուրանոցն ու ՔՈԱՖ ՍՄԱԲ համաժողովների կենտրոնը ծրագրի շրջանավարտներին կընդունեն հետուսուցողական պրակտիկայի:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020 թվականին Լոռին դասվել է ամենաշատ աղքատ տնային տնտեսություններ ունեցող մարզերի շարքում, իսկ արտագաղթի մակարդակով՝ հանրապետությունում երկրորդ մարզն է: Ավելին՝



CFLI/FCIL

Canada Fund for Local Initiatives
Fonds canadien d'initiatives locales



CHILDREN
OF ARMENIA
FUND

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը վերջերս հայտարարել է, որ Հայաստանը կանանց գործազրկության ամենաբարձր մակարդակն ունեցող հետխորհրդային երկիրն է, որտեղ կանայք կազմում են գործազուրկ ազգաբնակչության 60%-ը: Նախագիծը կիրականացվի Լոռու գյուղական վայրերում, որտեղ այս խնդիրները խորապես արմատավորված են գենդերային անհավասարության, գենդերային կարծրատիպերի, ընտանեկան բռնության և այլ երևույթների հետ մեկտեղ:

ՔՈԱՖ-ը կղեկավարի ծրագիրը, որի արժեքը կազմում է 52,714 կանադական դոլար, և հանդես կգա որպես համաֆինանսավորող կազմակերպություն՝ ներդնելով ընդհանուր ծախսերի 27%-ը:

Որպես գյուղական համայնքների զարգացման առաջատար հիմնադրամ՝ ՔՈԱՖ-ը բացառիկ արդյունքներ է գրանցել՝ պատրաստելով անհատներին և հատկապես կանանց (որոնք կազմում են ՔՈԱՖ-ի անձնակազմի 71%-ը) իրենց ապագան տնօրինելու և համայնքների կյանքին ակտիվորեն մասնակցելու համար: Նշված ֆինանսավորմամբ ՔՈԱՖ-ը կհասնի ավելի քան 30 խոցելի կանանց և նրանց ընտանիքներին հնարավորություն տալով առավելագույնի հասցնել իրենց ներուժը, ձեռք բերել ֆինանսական անկախություն և բարձրացնել իրենց տնային տնտեսությունների եկամուտները՝ դրանով իսկ խթանելով գենդերային հավասարությունը և սոցիալական ներգրավվածությունը Լոռու հյուրընկալության ոլորտում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

CFLI-ի մասին



CFLI/FCIL

Canada Fund for Local Initiatives
Fonds canadien d'initiatives locales



CHILDREN
OF ARMENIA
FUND

Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամը (*CFLI*) ֆինանսավորում է փոքրածավալ, սակայն մեծ ազդեցություն ունեցող ծրագրեր ավելի քան 120 երկրներում, որոնք համապատասխանում են զարգացման պաշտոնական աջակցության ստանալու պայմաններին: *CFLI*-ի տարեկան ծրագրային բյուջեն կազմում է 26,8 մլն ԱՄՆ դոլար, իսկ յուրաքանչյուր նախագծի միջինը՝ 31,000 ԱՄՆ դոլար: Նախագծերը պլանավորվում և իրականացվում են հիմնականում տեղական կազմակերպությունների կողմից և ընտրվում ու հաստատվում են Կանադայի համապատասխան դեսպանատան կամ Գերագույն հանձնաժողովի կողմից: